**Արձանագրություն N 3**
**«ՀԱԿԲՀ-ԳՀԾՁԲ-18/5» ծածկագրով գնանշման հարցման միջոցով**
**գնում կատարելու ընթացակարգի հանձնաժողովի նիստի**

*ք.Երևան*

«26» «հոկտեմբերի» 2018թ.
ժ 12:00

Մասնակցում էին՝
Հանձնաժողովի նախագահ՝ Մ. Հակոբյանը
Հանձնաժողովի անդամներ՝ Մ. Հովհաննիսյանը
Ա. Էկտիբարյանը
Հանձնաժողովի քարտուղար՝ Ն. Գևորգյանը

**I. ՀԱԿԲՀ-ԳՀԾՁԲ–18/5 ծածկագրով ընթացակարգի առաջին տեղ զբաղեցրած մասնակցի՝ հայտը ներկայացնելու օրվա դրությամբ հարկային մարմնի կողմից վերահսկվող եկամուտների գծով ժամկետանց պարտավորությունների գնահատման մասին**

(Մ. Հակոբյան)

Ընդունել ի գիտություն, որ.

- 22.10.2018թ. Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե հարցում է ներկայացվել առաջին տեղ զբաղեցրած մասնակից «ԼԵԳԱՐԱ» ՍՊԸ-ի՝ հայտը ներկայացնելու օրվա դրությամբ հարկային մարմնի կողմից վերահսկվող եկամուտների գծով ժամկետանց պարտավորությունների, ինչպես նաև հրավերով «ֆինանսական միջոցներ» որակավորման չափանիշի գնահատման համար սահմանված պայմանների առկայության վերաբերյալ՝ ներկայացնելով մասնակցի անվանումը և հարկ վճարողի հաշվառման համարը, ընդ որում ՝ եթե ՀՀ կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեն հարցումն ստանալու օրվան հաջորդող երեք աշխատանքային օրվա ընթացքում էլեկտրոնային եղանակով պատվիրատուին չի տրամադրում հարցման մասին եզրակացություն, ապա մասնակցի ներկայացրած հայտարարությունը համարվում է իրականությանը համապատասխանող:
- ՀՀ կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի կողմից հարցման մասին եզրակացությունը սահմանված ժամկետներում չի տրամադրվել:
- Հանձնաժողովի քարտուղարի կողմից 26.10.2018թ. գնահատման թերթիկների երկուական օրինակ տրամադրվել է հանձնաժողովի անդամներին:
- Հանձնաժողովի կողմից լրացված գնահատման թերթիկներում, Հայաստանի Հանրապետության ԿԱ ՊԵԿ-ից եզրակացությունը սահմանված ժամկետում չստանալու պատճառով, Մասնակցի՝ հայտը ներկայացնելու օրվա դրությամբ հարկային մարմնի կողմից վերահսկվող եկամուտների գծով ժամկետանց պարտավորությունների առկայության վերաբերյալ տվյալները գնահատվել են բավարար:

**2. Հայտարարություն պայմանագիր կնքելու որոշման մասին**

(Մ. Հակոբյան)

Հանձնաժողովը որոշեց.

- Ընտրված մասնակից ճանաչել 1-ին չափաբաժնով «ԼԵԳԱՐԱ» ՍՊԸ -ին.

Ընտրված մասնակիցը ճանաչվել է բավարար գնահատված հայտեր ներկայացրած մասնակիցների թվից՝ նվազագույն գնային առաջարկ ներկայացրած մասնակցին նախապատվություն տալու սկզբունքով.

- հաստատել պայմանագիր կնքելու որոշման մասին հայտարարության տեքստը
- ընտրված մասնակցի հետ պայմանագիր կնքել Օրենքի 10-րդ հոդվածով սահմանված անգործության ժամկետի ավարտից հետո:

Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 3, դեմ 0:

Հանձնաժողովի նախագահ՝ ______________ Մ. Հակոբյան

Անդամներ՝ ______________ Մ. Հովհաննիսյան

______________ Ա. Էկտիբարյան

Հանձնաժողովի քարտուղար՝ ______________ Ն. Գևորգյան